Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1915 հունվար 3 Կայացավ իթթիհատական կուսակցության կենտկոմի գաղտնի նիստը, որը որոշեց և մշակեց արևմտահայության տեղահանության և բնաջնջման միջոցները:

ապրիլ 7 Վանի հերոսամարտի սկիզբը:

ապրիլ 11 Սկսվեց հայերի ինքնապաշտպանական կռիվները Տարոնում:

ապրիլ 15 Թալիաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց տեղական իշխանություններին՝ արևմտահայության տեղահանության և բնաջնջման վերաբերյալ:

ապրիլ 20 Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: (Տևեց մինչև մայիսի 19-ը):

ապրիլ 24 Հայ մտավորականների ձերբակալումը Կ. Պոլսում և սպանությունը աքսորի ճանապարհին: Հայկական մեծ եղեռնի սկիզբը:

ապրիլ 27 Ծնվեց հայ բանաստեղծ Հովհաննես Շիրազը: (Վախճ. 1984թ.-ին):

մայիս 12 Դաշնակից պետությունների կառավարությունները հուշագիր հղեցին Թուրքիային՝ հայկական ջարդերին, որոնք սկսվել էին մեկ ամիս առաջ, վերջ տալու մասին: Հուշագիրը այդ ոճրագործությունը նկարագրում է որպես «... Թուրքիայի նոր հանցանք մարդկության և

մայիս 19 Վանի 1-ամսյա ինքնապաշտպանության հաղթական ավարտը:

հունիս 1 Շապին-Կարահիսարի խիզախ ինքնապաշտպանությունը:

հունիս 15 Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում թուրքական կառավարությունը կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 21 ղեկավարներին:

հուլիս 7 Թուրք ջարդարարների կողմից սպանվեց գրող և քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը: (Ծնվ. 1861թ.-ին):

հուլիս 13 Սուետիայի՝ Մուսա լեռան նշանավոր ինքնապաշտպանությունը:

օգոստոս 26 Թուրքերի կողմից կտտանքների ենթարկվելով սպանվեց հայ բանաստեղծ, գրական հասարակական գործիչ Դանիել Վարուժանը: (Ծնվ.

սեպտեմբեր 2 Ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը փրկեց Մուսա լեռան հայ պաշտպաններին: Այս դեպքերի հիման վրա Ֆրանց Վերֆելը գրեց իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, որտեղ նկարագրում է հայերի հաջող պաշտպանությունը թուրքական զորքերից, որոնք այստեղ էին բերվել իրագործելու հայկական ցեղասպանություն այդ տարածքում:

սեպտեմբեր 30 Ուրֆայի հայերի գոյամարտը:

դեկտեմբեր 3 Ծնվեց հայ գրող Սերո Խանզադյանը: (Վախճ. 1993թ.-ին):

1916 հունվար 1 Մոսկվայում լույս տեսավ «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթը:

փետրվար 1 Ռուսական զորքերը գրավեցին Մուշը, Բիթլիսը, Մամախաթունը:

փետրվար 3 Ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը:

մայիս 2 Փարիզում կազմակերպվեց «Ֆրանսիա-Հայաստան» կոմիտեն, որի կազմի մեջ մտան ականավոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ:

մայիս 13 Կովկասի փոխարքան հրաման տվեց կազմալուծել հայ կամավորական խմբերը:

մայիս 23 Պետրոգրադում լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն» Մ.Գորկու խմբագրությամբ:

օգոստոս 20 Ծնվեց հայ երգչուհի, մանկավարժ Տաթևիկ Սազանդարյանը:

նոյեմբեր 26 Ֆրանսիայի կառավարությունը որոշեց կոտորածներից ազատված հայ տարագիրներից կազմել կամավորական Արևելյան Լեգիոնը, որը կռվելու էր Թուրքիայի դեմ և դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում: (Լուծարքի ենթարկվեց 1920 թ. սեպտեմբերի

1917 փետրվար 27 Բուրժուադեմոկրատական II հեղափոխության և ցարիզմի տապալումը Ռուսաստանում:

մարտ 2 Բուրժուական ժամանակավոր կառավարության ստեղծումը Ռուսաստանում:

մարտ 9 Ժամանակավոր կառավարությունը որոշեց վերացնել Կովկասի փոխարքայությունը և ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե (Օզակոմ):

մարտ 16 Թիֆլիսում հիմնվեց «Հայ ժողովրդական կուսակցությունը»:

մայիս 2 Զորավար Անդրանիկի նախագահությամբ Երևանում բացվեց արևմտահայերի առաջին համագումարը:

մայիս 11 Թիֆլիսում բացվեց հայ ուսուցիչների կովկասյան համագումարը:

(Շարունակելի)

Լուրեր

Իրանահայ

Ս. Ստեփանոս վանքում յայտնաբերուած մասունքների մասին արտայայտւում է Թեհրանի հայոց թեմի առաջնորդը

Ս. Ստեփանոս վանքի եւ դրա խորանի տակ գտնուող մասունքների տուփի մասին պատմական աղբիւրները յիշատակում են, որ այս արկղը ժամանակին եղել է Հին Ջուղայում եւ իր մէջ պարփակում է Ս. Կարապետի մասունքները: 10-րդ դարում Ջուղա տեղափոխուելուց յետոյ՝ Առաքել Դաւրիժեցի պատմիչի համաձայն՝ Հին Ջուղայի եւ նրա Ամենասուրբ Երրորդութիւն եկեղեցու աւերումից յետոյ դրա աւագ խորանի տակի արկղի մէջ յայտնաբերուել են սուրբ մասունքները եւ մի կտոր մագաղաթ, որոնք որոշ ժամանակ անց յանձնուել են Ջուղայից ոչ-այնքան հեռու գտնուող հոչակաւոր Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի եպիսկոպոս Շմաւոնին: Այդ մագաղաթը 972-ին բերեցին Ջուղա եւ Ջուղայից փոխադրեցին Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը: Հետեւաբար՝ ենթադրւում է, թէ այդ մասունքները պատմական խորք ունեն: Ըստ աւանդութեան՝ գիտենք, որ երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ՝ վերադառնում է Հայաստան, տեղի Ղեւոնդիոս եպիսկոպոսը որպէս յարգանքի եւ սիրոյ արտայայտութիւն՝ Գրիգոր Լուսաւորչին տալիս է Ս. Յովհաննու Կարապետի մասունքների մի մասը: Այդ մասունքների մի մասը բերում է եւ Տարօնի Մշոյ քաղաքի մէջ հիմնում է Ս. Յովհաննու Կարապետ մայր եկեղեցին եւ մասունքների մի մասը տեղադրում այնտեղ: Հիմա թէ ինչպէս հետագայում ուրիշ տեղ է փոխադրուել՝ դա երեւի արդիւնքն է յաճախակի աւերումների եւ մասունքների աւելի ապահով տեղ փոխադրելու մեր հայրերի նախանձախնդրութեան:



Ֆրանսիացի ճանապարհորդը յիշատակում է նաեւ, որ 16-րդ դարում եւ 17-րդ դարի սկիզբը Ս. Ստեփանոս Նախավկայի վանքից անցած ժամանակ ինքը տեսնում է այդ սուրբ տուփը եւ իրեն ասում են, որ այս տուփը պատկանում է Քրիստոսի 12 աշակերտներից մէկին: Օրերս հաղորդուած լուրերի համաձայն՝ սրանից մի քանի օր առաջ Իրանի Մշակութային ժառանգութիւնների կազմակերպութեան մասնագէտները մեկնել են Թաւրիզ եւ Թեմական խորհրդի ու պատկան մարմինների հետ գնացել Ս. Ստեփանոս, գտնուած մասնատուփը կնքել են մեղրամոմով, բերել յանձնել են Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Նշան ծ. վրդ. Թոփուզեանին, որը այժմ պահւում է Թաւրիզի մեր եկեղեցիներից մէկի խորան ներքեւ:

«Ալիք»

Հասարակական

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ «ԽԱՂԱՂ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄԸ» 1923-89 ԹԹ.

65 տարում նախկին ինքնավար մարզում հիմնադրվել են 36 ադրբեջանական գյուղեր

Ստեփանակերտցի քաղաքական վերլուծաբան Դավիթ Բաբայանը Լաչինի եւ հատկապես Քելբաջարի շրջանը համարում է Ղարաբաղի եւ Հայաստանի անվտանգության ապահովող ամենակարեւոր տարածքներից: Բարձր լեռնային ռելիեֆը Քելբաջարը դարձնում է պաշտպանության համար շատ նպաստավոր տարածք, սակայն, ըստ

Բաբայանի, այս շրջանի կարեւորությունը չի սահմանափակվում միայն դրանով: «Այստեղ են սկիզբ առնում Ղարաբաղի ամենախոշոր եւ Հայաստանի կարեւոր գետերը՝ Թարթառը, Խաչենը, Արփան եւ Որոտանը: Նախկին ԼՂԻՄ հիմնական գետերի միջին տարեկան հոսքը 942 մլն խմ է, որից 83 տոկոսը սկիզբ է առնում հենց Քարվաճառի շրջանում: Արփան եւ Որոտանը Սեւանա լճի փրկության միակ երաշխիքն են: Եթե այս տարածքն անցնի Ադրբեջանին, ապա վերջինս կստանա Արցախի եւ Հայաստանի վրա ճնշում գործադրելու շատ ուժեղ լծակ», ասաց Բաբայանը:

Քաղաքական վերլուծաբանը մի ուսումնասիրություն է կատարել՝ անվանելով «ջրաժողովրդագրություն». ինչպես էին Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ գոյության շրջանում նոր ադրբեջանական գյուղեր հիմնում եւ հիմնադրման համար հատկապես ինչի՞ն էին կարեւորություն տալիս: Բաբայանը պարզել է, որ 1923-89 թթ. Ղարաբաղում հիմնադրվել են 36 ադրբեջանական գյուղեր, որոնցից 30-ն ունեցել են ջրային-քաղաքական նշանակություն:

Ադրբեջանի ներքգործնախարար Ռամիլ Ուսուբովը Ղարաբաղում Հեյդար Ալիեւի վարած քաղաքականության մասին ասել է. «Միայն Ալիեւի՝ Ադրբեջանի ղեկավար դառնալուց հետո էին ղարաբաղաբնակ ադրբեջանցիներն իրենց զգում երկրամասի լիիրավ տերը: Այդ հանգամանքը հիմք եղավ ԼՂ հարակից՝ Լաչինի, Աղդամի, Ջեբրայիլի, Ֆիզուլու եւ այլ շրջաններից ադրբեջանցի բնակչության Ղարաբաղ ներհոսքի համար»:

Դավիթ Բաբայանը «Ազգի» հետ զրույցում ասաց, որ ԼՂ-ի նկատմամբ Բաքուն խտրական քաղաքականություն էր վարում նաեւ մինչեւ Ալիեւի իշխանության գալը: «ԼՂԻՄ շրջկենտրոնները միմյանց կամ մայրաքաղաք Ստեփանակերտին կապող կարեւոր ռազմավարական ճանապարհներն անցնում էին հարակից ադրբեջանական շրջաններով, կամ ԼՂԻՄ-ի ներսի ադրբեջանական բնակավայրերով: Սակայն ադրբեջանական նոր գյուղերի հիմնադրումն ուներ ոչ միայն ռազմավարական կարեւոր հաղորդակցությունների վերահսկողության իրականացման, այլեւ ջրաքաղաքական լուրջ նշանակություն», նշեց նա:

1989 թ. տվյալներով՝ Ասկերանի շրջանում գյուղերի թիվը 49 էր, որոնցից 38-ը՝ հայկական, 10-ը՝ ադրբեջանական, իսկ Դաշբուլաղը (Աստղաշեն) խառը բնակչությամբ: Ադրբեջանական բոլոր 10 գյուղերն էլ ունեին ջրային քաղաքական կարեւոր նշանակություն: Նույն պատկերն էր Մարտակերտի շրջանում: 1989 թ. տվյալներով՝ շրջանն ուներ 56 գյուղ, որից 43-ը՝ հայկական, 10-ը՝ ադրբեջանական, իսկ 2 գյուղ՝ հայ-հունական եւ հայ-ռուսական: Ադրբեջանական բոլոր 10 գյուղերն էլ գտնվել են գետերի ակունքների վրա:

Բաբայանը նկատում է, որ Մարտունու շրջանում 1926 թ. կար ընդամենը 1 ադրբեջանական գյուղ՝ Ղարադաղլուն 97 բնակչով, իսկ 1989 թ. տվյալներով՝ նրանց թիվը հասնում էր 1074-ի, այդ տարիներին շրջանում հիմնվում են եւս 4 ադրբեջանական գյուղեր: Շուշիի շրջանում, 1989-ի տվյալներով, կային 27 գյուղական բնակավայրեր, որոնցից 5-ը՝ հայկական, մյուս 22-ը՝ ադրբեջանական, ընդ որում ադրբեջանական 19 գյուղ հիմնադրվել է 1920-ական թթ. հետո:

Բաքվի իշխանությունները, ըստ Բաբայանի, իրականացնում էին հայկական գյուղերի «խաղաղ բռնագրավում», այսինքն՝ հայկական այս կամ այն գյուղում մշտական բնակություն էին հաստատում 1 կամ մի քանի ադրբեջանական ընտանիքներ: «Որոշ ժամանակ անց այնտեղ վերաբնակեցվում էին եւս մի քանի ընտանիքներ, եւ գյուղը վերջնականապես վերածվում էր ադրբեջանականի: Նման ճակատագիր ունեցավ հայկական Խոջալու գյուղը: 1926 թ. մարդահամարի տվյալներով՝ Խոջալուն մաքուր հայկական գյուղ էր, որտեղ ապրում էր 888 մարդ: 60-ականների սկզբներին հայկական Խոջալուի կողքին երեւան եկավ ադրբեջանական Խոջալուն: 1989-ին Խոջալուն զուտ ադրբեջանական էր՝ 1661 բնակիչներով», ասաց նա:

Բաբայանի կարծիքով, Բաքուն ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն էր իրականացնում ոչ միայն ԼՂԻՄ-ում, այլ հարակից Քելբաջարի եւ Լաչինի շրջաններում՝ բացարձակ ժողովրդագրական վերահսկողություն հաստատելով Հագարու գետի եւ նրա վտակների, ինչպես նաեւ Թարթառ եւ Խաչեն գետերի ու նրանց վտակների վրա: Ավելորդ չէ հիշեցնել, որ նախքան ԼՂԻՄ-ի ձեւավորումը Հայաստանն ու Ղարաբաղն ունեցել են ընդհանուր սահման, եւ միայն 20-ական թթ. է ձեւավորվել այսպես կոչված Լաչինի 7 կմ-անոց միջանցքը, որը բաժանում էր Հայաստանը Ղարաբաղից:

1918 թ. տվյալներով՝ Լաչինի շրջանի տարածքում մնացել էին մի քանի հայաբնակ գյուղեր: Այսպես, 1918 թ. Հակ գյուղում ապրում էր

811 հայ, որոնք դուրս են քշվել գյուղից: 1926 թ. տվյալներով՝ Մինքենդի վերանվանված Հակում բնակչությունը կազմում էր 751 մարդ, որոնցից միայն 5-ն էր հայ, մնացածը քրդեր էին: Շուտով քրդերը եւս «անհետացան»: 80-ական թթ. տվյալներով, Մինքենդի բնակչությունը մաքուր ադրբեջանական էր եւ հասնում էր 2306-ի: Բաբայանն ասում է, որ Բաքվի իշխանությունների ռազմավարությունը Քելբաջարի եւ Լաչինի շրջաններում ուղղված էր Թարթառ եւ Խաչեն գետերի ու նրանց վտակների ավազանի բնակեցմանը: «Ադրբեջանը հատկապես առաջնահերթ նշանակություն էր տալիս ջրային զարկերակների ակունքներում նոր բնակավայրերի հիմնադրմանը: Դա հնարավորություն էր տալիս հարկ եղած դեպքում վնասարար ներգործություն ունենալ ստորին հոսանքներում գտնվող հայկական բնակավայրերի վրա: Ջրաժողովրդագրական քաղաքականության արդյունքում ադրբեջանցիները մինչեւ 1989 թ. բացարձակ վերահսկողության տակ առան Թարթառ եւ Խաչեն գետերի ակունքներն ու վտակները», ասաց նա:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ, Ստեփանակերտ-Երեւան

«ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԵՆԵՋԵՐԸ»

Վերջերս մոսկովյան «ՌՈՍԻԱ» հեռուստաալիքը եթեր հեռարձակեց ուշագրավ մի հաղորդում՝ նվիրված Անաստաս Միկոյանին: 20-րդ դարի առաջին քառորդի աշխարհացունց իրադարձությունների հորձանուտում հայտնված Անաստաս Միկոյանն իր կյանքը կապեց Լենինի ստեղծած տոտալ համակարգի հետ: Ինչպես մեր ժամանակներում՝ 15 տարի առաջ, այնպես էլ 1917 թ., հասարակական կացութաձեւի 180 աստիճան փոփոխությունը բերեց ողբերգական իրադարձություններ, որոնց ընթացքում միլիոնավոր շարքային մարդկանց ողբերգական ճակատագիրը բաժանեցին նույն հեղափոխություն իրականացնողներն ու նվիրյալները: Նոր իշխանության համար կատաղի պայքարում խորտակվեցին խոշոր անհատականություններ Լեո Բրոնշտեյն Տրոցկին, Կամենեւ Ռեզելֆելդը, Զինովեւը, Ձերժինսկին, Ֆրունզեն, Կիրովը, Օրջոնիկիձեն, Տուխաչեւսկին, Մալենկովը, Մոլոտովը, Կագանովիչը, Խրուշչովը եւ շատ ուրիշներ: Տասնամյակներ տեւած այդ պայքարում կանգուն մնաց մեկ մարդ՝ Անաստաս Միկոյանը: Հետադարձ հայացք նետելով այդ մարդու անցած ճանապարհին եւ գործունեությանը, զարմանալ, ինչու չէ, նաեւ հիանալ կարելի է նրա ինտելեկտով, ճկուն մտքով, սթափ կշռադատելու կարողությամբ: Պատահական չէ, որ ռուս պատմաբանը նրան համարում է 20-րդ դարի լավագույն դիվանագետներից մեկը, համեմատելով այնպիսի գիգանտների հետ, ինչպիսիք էին Թալեյրանն ու Մետերնիխը:

Լինելով իր ժողովրդի ավանդապահ զավակը, Միկոյանը Մոսկվայում ստեղծեց մի բազմանդամ եւ շատերի նախանձն ու զարմանքը հարուցող գերդաստան, հավատարիմ մնալով իր իմաստուն կնոջ՝ Աշխեն Թումանյանին: Ընդամենը 26 տարեկանում նա արդեն ղեկավարում էր ամբողջ հյուսիս-կովկասյան երկրամասը: Այդ տարիներին առեւտրի ամբողջ համակարգը փլուզված էր եւ կենտկոմի երիտասարդ անդամը ամեն ջանք գործադրեց սղաճի եւ քաղաքական խիստ հակամարտությունների այդ բարդ տարիներին ոտքի կանգնեցնելու առեւտրի համակարգը: 1934 թ. նոր կազմավորված սննդարդյունաբերության ժողկոմատը վստահորեն գլխավորեց Անաստաս Միկոյանը: Նրա ջանքերի շնորհիվ երկրում զրոյական մակարդակից զարգացավ պահածոների, շաքարի, թխվածքների, երշիկի, նրբերշիկի, ճարպերի արտադրությունը: Երկարատեւ գործուղման մեկնելով ԱՄՆ, նա մանրամասն ծանոթացավ այդ երկրի սննդարդյունաբերության տարբեր ճյուղերի տեխնոլոգիաներին: Արդեն 1937

թ. նա ժողկոմխորհի նախագահի տեղակալն էր: 1937 թ. տեռորի ժամանակներում Միկոյանը չափազանց զգույշ էր իր քայլերի մեջ, մանավանդ Օրջոնիկիձեի ինքնասպանությունից հետո, երբ Ստալինը կանչեց նրան եւ սպառնաց: Դիկտատորի համար դժվար չէր 26 կոմիսարների գնդակահարությունից պատահաբար խուսափած միակ մարդուն՝ Միկոյանին մեղադրանք ներկայացնել: Այդ օրերին Միկոյանի կյանքը մազից էր կախված: Հետագայում որոշ մարդիկ մեղադրեցին Միկոյանին 1937 թ. Հայաստանում «զտումներին» մասնակից լինելու համար: Ինչ խոսք, այսպիսի մեղադրանքը զուտ էմոցիոնալ մոտեցումների հետեւանք էր: Նա Հայաստան էր եկել Գեորգի Մալենկովի հետ, որ այդ օրերին դեռ Կենտկոմի անդամ էլ չէր եւ իր մորն էլ չէր խնայի Ստալինի վստահությունը շահելու համար: Ժամանակները դավադիր էին, յուրաքանչյուրը հսկում էր կողքի կանգնածին: Միկոյանը ոչ մի հնարավորություն չուներ օգնելու հայրենակիցներին: Ավելին, Երեւանում դեռ չէին սկսել առաջին նիստը, երբ դուռը բացվեց եւ ներս մտավ Թիֆլիսից ժամանած Բերիան՝ ասես Միկոյանի վրա կրկնակի հսկողություն սահմանելու միտումով:

Այնուհանդերձ Մոսկվայում Միկոյանը կարողացավ օգնության ձեռք մեկնել գնդապետ Հովհաննես Բաղրամյանին, որ 1937 թ. սովորում էր գլխավոր շտաբի ակադեմիայում: Այս հաստատությունում եւս մոլեգնում էր «հեղափոխական գերզգոնությունը», խրախուսվում մատնությունը: Բաղրամյանին մեղադրում էին դաշնակցության բանակում ծառայելու մեջ: Ապագա մարշալին բարեկամները խորհուրդ տվեցին դիմել Միկոյանին: Վերջինս կարողացավ իր հայրենակցի գլխից հեռացնել Դամոկլյան սուրը:

Առավել մեծ է Միկոյանի ծառայությունը Հայրենական պատերազմի տարիներին: Հսկայածավալ աշխատանքը, որ օր ու գիշեր չէր դադարում Միկոյանի համար, կապված էր բանակի բոլոր տեսակի մատակարարումների, էվակուացիոն խնդիրների հետ: Պատահական չէր, որ դեռ 1943 թ. Միկոյանն արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Պատերազմից հետո Միկոյանը մնաց որպես Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ եւ արտաքին առեւտրի մինիստր:

1949-52 թթ.՝ տեռորի նոր բորբոքման տարիներին Ստալինն արդեն հազվադեպ էր հրավիրում Միկոյանին: Նրան այլեւս չէր հրավիրում նույնիսկ քաղբյուրոյի նիստերին: Միկոյանը գրում է. «...Նրա ոժգոհությունը Մոլոտովից եւ ինձնից, որքան հասկանում եմ, վաղուց էր հասունացել... հանձինս մեզ նա տեսնում էր իր մութ գործերի վկաներին... նրա՝ տարիների հետ սրվող հիվանդ կասկածամտության պարագայում մենք պետք է վերանայինք»:

Ստալինի մահից հետո Անաստաս Միկոյանը նորից իր ակտիվ քաղաքական ու տնտեսական գործունեության բարձրակետում էր: Կոմկուսի XX համագումարում Միկոյանը կրքոտ ելույթ ունեցավ Ստալինի հասցեին եւ զարմացրեց բոլորին «կատեգորիկ որոշակիությամբ»: Այդ տարիներին Միկոյանը փայլուն դրսեւորեց իր դիվանագիտական ունակությունները: Դա վերաբերում է թե՛ 1956 թ. Լեհաստանում ստեղծված ճգնաժամին, թե՛ հունգարական դեպքերին, ինչի արդյունքում հնարավոր եղավ խուսափել մեծ արյունահեղություններից:

1956 թ. ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու Անաստաս Միկոյանը Երեւանի իր ընտրողների ընդհանուր ժողովում ելույթ ունենալով, հատկապես շեշտեց Եղիշե Չարենցի ստեղծագործությունները տպագրելու, նրա անունը վերականգնելու անհրաժեշտությունը: Ասվածը ընդունվեց բուռն ծափահարություններով:

Ստալինյան սառույցի կոտրվելուց հետո Միկոյանը դիվանագիտական այցելություններ կատարեց Պակիստան, Հնդկաստան, Չինաստան: Անհրաժեշտ էր ճկուն, խելացի քաղաքականություն եւ ոչ թե կոպիտ թելադրանք: Միկոյանը կարողացավ վերականգնել բարիդրացիական հարաբերությունները Հարավսլավիայի նախագահ Իոսիֆ Բրոզ Տիտոյի հետ, որի հետ սուր կոնֆլիկտի մեջ էր Ստալինը: 1959 թ. Միկոյանը մեկնեց ԱՄՆ՝ բացելու ՍՍՀՄ ցուցահանդեսը եւ նախապատրաստելու Խրուշչովի այցը: Միկոյանը փայլուն կատարեց իր առաքելությունը: ԱՄՆ-ի Սամուելի ազգային ակումբը հայտնի էր օտարերկրյա դիվանագետներին եւ պետական գործիչներին սադրիչ հարցերով ու սուր բանավեճերով նեղը գցելու եւ քրտնաթոր դուրս հանելու սովորությամբ: Միկոյանի նկատմամբ հակառակը կատարվեց: Միկոյանը զարմացրեց

ժուռնալիստներին սուր եւ հումորով պատասխաններով: Նույնիսկ Միկոյանին կատակով հարցրին. «Արդյոք նա չի՞ պատրաստվում իր թեկնածությունն առաջադրել սենատում»:

Կուբայական (Կարիբյան) ճգնաժամի օրերին՝ 1962 թ., երբ աշխարհը կանգնած էր երրորդ համաշխարհային պատերազմի փաստի առաջ, Միկոյանի դիվանագիտական փայլուն գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել համաշխարհային աղետից: Կուբայական ճգնաժամի խաղաղ լուծումը «Միկոյանի ամենակարեւոր «դերն» էր համաշխարհային դիվանագիտության մեջ»: Այս առիթով 60-ականների ամերիկյան մամուլը Միկոյանին համարեց «մեր ժամանակների հակաճգնաժամային լավագույն մենեջերը»: 1963 թ. Անաստաս Միկոյանի ակտիվ միջամտությամբ Արարատյան դաշտավայրից դուրս մղվեց բամբակի արտադրությունը, որը ծանր բեռ էր մեր գյուղատնտեսության համար: 1964 թ. Միկոյանն ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ: Սովորաբար այս պաշտոնից էր սկսվում քաղբյուրոյի անդամների պաշտոնաթողության գործընթացը: 1965 թ. լրացավ Միկոյանի 70 տարին: Նոյեմբեր ամսին նա անցավ թոշակի:

Անաստաս Միկոյանը հայ ժողովրդի իմաստուն զավակներից է: Նա հայ մարդու ազգանունը արժանապատիվ ներկայացրել է աշխարհին: Թերահավատների համար ասենք, որ անցել են այն ժամանակները, երբ աշխատում էր «ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է» գազանաբարո կարգախոսը: Մենք պետք է հասկանանք, որ անհրաժեշտ է արժանին մատուցել հայ ժողովրդիականավոր զավակներին, անկախ նրանց կուսակցական, քաղաքական եւ այլ կողմնորոշումներից: Այսօր մենք ամենատարբեր ձեւերով եւ մոտեցումներով պետք է մեծարենք Անաստաս Միկոյանին, Աղասի Խանջյանին, Իվան Թեւոսյանին, մարշալ Խուդյակով-Խամփերյանցին եւ հայ ժողովրդի շատ այլ արժանավոր զավակների:

Եզրափակելով խոսքը Անաստաս Միկոյանի մասին, դիմում ենք Վանաձորի (նախկին Ղարաքիլիսա, Կիրովական) քաղաքի ղեկավարությանն ու ազգաբնակչությանը՝ հանրաքվե անցկացնել, փոխել «Վանաձոր» անիմաստ անվանումը, քաղաքը վերանվանել «Միկոյան»:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂԱԼՅԱՆ- ԱԶԳ

Մշակութային

Վահան Գևորգյան

Մտքերս վաղուց քո շուրջն են դառնում
Տարիների հետ ես՝ ինքս փոխվում
Սրտիս խորքերում դու նույնն ես մնում,
Ինչպես արևը՝ չես փոխվում բնավ:

Խենթ ու կանացի խաղերով լեցուն
Սրտիցս վազող ալիք ես դառնում,
Ինձնից խուսափում, և ո՞ւր ես թևում
Գիրկս միշտ թափուր քեզ եմ կարոտում:

Դու իմ մտքի մեջ, անունդ շուրթիս,
Հազար սրտերից՝ քո սիրտը թաքուն
Տրջմոլիկ դարձած ինձ է փնտրում:

Համրանքն օրերի խառնում է, խնդում,
Դու խենթ ու կրակ բոց ես ավերիչ՝
Սիրտս քամում ես ժպիտով թովիչ:

***

Սիրտս քամում ես, ժպիտով թովիչ:
Եվ իմ շուրթերը համբույրի կարոտ
Ծովդ երիզող ափեր են թվում՝
Դու ափից փախչող ալիք ես ընդմիշտ:

Դու սրտիս խորքում իմ սիրո ակունք,
Քո խենթ խաղերին՝ բերած ու տարած
Հույզերին բոլոր , թո՛ղ որ տիրանամ
Տենչերով անմար՝ արևն ես հուր-հեր:

Եվ նրա նման քո հեռվից անվերջ
Շուրջս պտտվում, ու չես մոռանում,
Չե՛ս թողնում մնամ՝ մոլոր ու մենակ:

Իմ երազները անվերջ նորոգում,
Սին կասկածներս անդարձ կորցնում,
Խանդի խաղերով որս չես մաշում:

***

Խանդի խաղերով օրս չես մաշում,
Նմանըդ չկա արար աշխարհում:
Մտքումս անգին՝ ես քեզ հորինել
Քեզ համար անգամ անուն եմ գտել:

Եվ ամեն անգամ, երբ քո անունով
Կանչում եմ մեկին, ժպտում ես կրկին.
Ինքդ լավ գիտես ալիքը այդ նոր՝
Ծովացած սրտիս խորքում կմարի:

Դու ես ակունքը հույզերիս բոլոր,
Իմ ապրող երազ՝ հավերժող իմ սեր
Դու հրաշք ազջիկ, իմ բա՛խտի արև:

Շուրթերիս երգը, խի՛նդը օրերիս
Երկիրն արևի շուրջն է պտտվում,
Արցունքն ու աղն ես շաղի վերածում:
***
Արցունքն ու աղն ես շաղի վերսծում,
Ինձնից խուսափում, փախչում ես անգին,
Վաղ լուսաբացին պարտեզը մտած
Ծով ծաղիկների շուրթերին փարվում:

Հրապույրներիդ պաշարն անսպառ
Շռայլ ու շենշող փռում ես շուրջդ,
Ու ես ամենուր լցնում եմ օրս
Քո նշաններով իմ կարոտն է ծով:

Օրվա մեջ թողած ցոլքերդ լուսե
Մեկ առ մեկ գտնում, նորից մեկտեղում
Հույսերիս տունն եմ լույսովդ լցնում:

Իմ երգ, իմ երազ, լուսավոր իմ սեր,
Սիրտս քեզ համար վարդատուն, արի
Շուրթերդ նրբին՝ թերթեր են վարդի:
***
Շուրթերդ նրբին՝ թերթեր են վարդի
Ձեռքերդ ճերմակ՝ զույգ աղավնիներ,
Աչքերդ լեցուն կապույտով ծովի՝
Ինձ երկինք տանող հավքն են հեքիաթի:

Երկար չեմ մնա այս հողի վրա,
Օրերից մի օր կդառնամ ես հող,
Իմ երազներին դու տար ճախրանքի
Թող նրանք օրդ փոխեն հրաշքի:

Թող սերը հավետ ճախրի երկնքում
Համբույրի կարոտ շուրթերդ անգին
Արևածագի թովչանքն ունենան:

Իմը՝ աշխարհում, քո՛ սերը օրհնած
Արևածագով աշխարհն է հարբած
Արևն աշխարհին, դու իմն ես անգին:
***
Արևն աշխարհին, դու իմն ես անգին,
Երբ սերն է ծփում սրտերում թաքուն,
Սիրո ակունքում արևն է խայտում,
Արար աշխարհին՝ խինդ է պարգևում:

Սիրով լեցուն է երկինքը անհուն,
Թե խանդից անգամ՝ ամպում է, մթնում,
Սիրո ակունքում արևն է հարբում,
Տաք արցունքները երկիրն է կրում:

Աստղերի հետ, գիշերը արթուն
Քեզ բերող ճամփան մտքումս չափում
Քեզ համար անգին երգ եմ արարում:

Արար աշխարհում արևն է վկա
Դու ես ինձ համար հրաշքը ներկա,
Ես քեզ համար եմ օրերս վատնում:
***
Ես քեզ համար եմ օրերս վատնում,
Դու ամենուրեք կանթեղն ես լույսի,
Երազս՝ օրհնիր, սիրտս՝ բորբոքիր,
Բերկրանքով լցրու, սերս վառ պահիր:

Եվ ամեն անգամ երբ թվում է թե
Ինձ պիտի պարզես լույսերդ լեցուն,
Ցոլքերդ թողած ինչպես խենթ ալիք
Հեռու ես փախչում, ու չես մոտենում:

Կորչում է կանչս գիշերվա մթում
Սիրտս փոթորկված թափուր է մնում
Ես հողի վրա, դո՛ւ միշտ երկնքում:

Դո՛ւ ինձ չես հիշում, քո մտքում չկամ:
Իմ խինդը օրվա քո շուրջն է դառնում:
Ուրիշ ես անգին իմ երազներում:
***
Ուրիշ ես անգին իմ երազներում,
Աշխարհն է ունայն, չկա քեզ նման,
Երբ կրքով անափ իմ գիրկը եկար
Աստղը հույսի՛ քեզնի՛ց լույս առավ:

Տաք համբույրներով փարվեցիր դեմքիս
Սիրտս վարդի պես քեզ համար բացվեց:
Դու բախտիս արև, իմն ես հարատև,
Հույզերով լեցուն ծով ես արցունքի:

Հույսերիս ակունք, խինդը՝ օրերիս,
Սերդ ավետող՝ խոստումներդ ծով,
Բանալի տուր ինձ քո սիրտը բացող:

Դալիք անծանոթ ճապեքին օտար,
Իմ լույսի փարոս, երազներիս տուն,
Ես քեզանով եմ աշխարհին տիրում:
***
Ես քեզանով եմ աշխարհին տիրում,
Մտքերը անթիվ զինվորներ օրվա
Չեն մենամարտում ու կռիվ չկա,
Բայց խանդն է թաքուն նրանց սպանում:

Հիացումներից՝ հիասթափության
Ափերն է նետում, ինչպես խեցիներ,
Ու երգը սիրո մարում է արդեն
Ափին կարոտող ծփանքով անձայն:

Իմ սերը ծովի կապույտ ու մթին
Խորքերում կորած երազանքն է հին,
Ուր հորիզոնն է եզրագիծն անհաս:

Սիրտս ծովի պես փոթորկված կրկին՝
Ափերից ելած իր կուրծքն է ծեծում,
Իմ կարոտների ակունքն է ծփում:
***
Իմ կարոտների ակունքն է ծփում,
Եվ ծովի կապույտ հարթության վրա
Ճիչ ու աղմուկով արևին գրկած
Ճայերն են հիմա երկինք մխրճվում:

Ճերմակ ու թեթև ամպերն են սահում,
Կասկածն է նրանց գուրգուրում թաքուն,
Գիշերվա գրկում պիտի զորանան
Խանդի ցանցերով մեր սերը որսան:

Շարունակվում է կյանքը նորից,
Անձրևն հիմա գովքն է արևի
Երգով ավետում բացվում է լույսը:

Արևը չկա, բայց լույսը նրա
խայտում է, խաղում, ջրերի վրա
Աչքս ջո՛ւր դառավ, ե՞րբ ես դու գալու:
***
Աչքս ջո՛ւր դառավ, ե՞րբ ես դու գալու,
Որերրորդ անգամ ինձ եմ հարցնում,
Ավաղ պատասխան մտքումս չկա...
Ինքդ էլ հիմա թաքուն արտասվում,

Գուցե կարծում ես, թե ես հեռացել
Ու մոռացել եմ, խորթացել քեզնից,
Հին կարոտներիս հրաժեշտ տվել
Օրս լցրել եմ նոր երազներով:

Անմիտ խաղերի խարդավանքի մեջ
Ես ու դու հիմա տանջում ենք իրար,
Աշխարհն ունայն է, մենք էլ անհամբեր:

Վատնում ենք ներկան, օրորում հույսեր,
Գալիքն էլ անհայտ տագնապով է լի
Ապրում եմ անվերջ հուշով անցյալի:
***
Ապրում եմ անվերջ հուշով անցյալի...
Մենք այս կյանքում պիտի հանդիպենք,
Որ մահից հետո հեշտ գտնենք իրար...
Ինչպես արևը ծովին է գտնում...

Արևը մտավ, աստղերն արթուն
Գիշերվա համար լույս են արարում:
Երազի նման լույսն է առկայծում
Մեր ապրած օրը երազ էր թվում:

Միշտ երազի լույսերով լեցուն
Քո դեմքն է բերում ու տեղավորում,
Հայացքիս դիմաց ամենուր դու կաս:

Քո շեկ վարսերի շուքն եմ օրօրում,
Հուշերիս ծովում լողացող արև՝
Իմ երազներում դու ես հավերժում:
***
Իմ երազներում դու ես հավերժում
Քո սերն ամենուր ինձ խրախուսում,
Հուսալքումի պահերին թաքուն
Հարազատի պես հոգսերն է կիսում:

Ուրիշ ոչ մեկը չունեմ աշխարհում,
Դու ես միակը իմ մինուճարը,
Ծով երազներիս ճախրանքի տանում
Մեղանչումներիս ժպիտով փարվում:

Աստծուն աղերսում իմ օրվա համար,
Գիշեր ու ցերեկ իմ շուրջը դառնում
Իմ կարոտների ծովում ծավալվում:

Հիացմունքներիս ծփանքով հարբած
Շուրթերով վանում շուրթերիս փարված
Հիասթափության բաժակը լցված:
***
Ես ամենուրեք քեզ փնտրեցի
Մտքերս վաղուց քո շուրջն են դառնում,
Սիրտս քամում ես ժպիտով թավիշ
Խանդի խաղերով օրս չես մաշում:

Արցունք ու աղն ես շաղի վերածում:
Շուրթերդ նրբին թերթեր են վարդի,
Արևն՝ աշխարհին, դո՛ւ ի՛մն ես անգին,
Ես քեզ համար եմ օրերս վատնում:

Ուրիշ ես անգին իմ երազներում,
Ես քեզանով եմ աշխարհին տիրում:
Իմ կարոտների ակունքն է ծփում:

Աչքս ջուր դարձավ, Ե՞րբ ես դու գալու
Ապրում եմ անվերջ հուշով անցյալի
Իմ երազներում դու ես հավերժում: